# «ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

**Հոդված 189. Մաքսային հսկողության գոտիները**

1. Մաքսային հսկողության գոտիները սահմանվում են Միության մաքսային օրենսգրքի 319-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. Կառավարությունը մաքսային հսկողության իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական սահմանի անցման կետերում, մաքսային ձևակերպումների վայրերում, մաքսային մարմինների գտնվելու վայրերում կարող է ստեղծել մաքսային հսկողության գոտիներ:

3. Մաքսային հսկողության գոտու տարածքում առևտրային գործողության իրականացումը, ապրանքների, տրանսպորտային միջոցների տեղաշարժը, անձանց, ներառյալ այլ պետական մարմինների պաշտոնատար անձանց մուտք գործելը և դուրս գալը կարող է տեղի ունենալ միայն մաքսային մարմինների թույլտվությամբ և նրանց հսկողության ներքո, բացառությամբ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

4. Մաքսային հսկողության գոտու տարածքում պետական մարմինների պաշտոնատար անձանց կողմից օրենքով իրենց վերապահված իրավասության սահմաններում գործողությունների իրականացումը կարող է տեղի ունենալ մաքսային մարմինների հետ փոխգործակցության միջոցով՝ մաքսային մարմինների հսկողության ներքո:

5. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում լիազորված տնտեսական օպերատորի շինություններում, բաց հրապարակներում և այլ տարածքներում ստեղծվող մաքսային հսկողության գոտիների վրա:

6. Մաքսային հսկողության գոտիներին ներկայացվող տեխնիկական պահանջները և մաքսային հսկողության գոտիներում վարքագծի պարտադիր կանոնները սահմանում է Կառավարությունը:

**Հոդված 302.1. Մաքսային հսկողության գոտում սահմանված պարտադիր վարքագծի կանոնները խախտելը**

1. Մաքսային հսկողության գոտում սահմանված վարքագծի պարտադիր, ներառյալ, մաքսային հսկողության գոտում անձանց և տրանսպորտային միջոցների տեղաշարժման կանոնները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքը 6 ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ երկու հարյուր հազար դրամի չափով:

**Հոդված 326. Վարչական ձերբակալումը**

1. Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու, մաքսային կանոնների խախտման վերաբերյալ որոշումը կայացնելու նպատակով, եթե մաքսային կանոնների խախտում կատարած անձը խոչընդոտում է մաքսային ծառայողների գործառույթների իրականացմանը, հրաժարվում է դադարեցնել կատարվող իրավախախտումը կամ սպառված են այլ միջոցները մաքսային կանոնների խախտում կատարած անձի ինքնությունը պարզելու համար, թույլատրվում է մաքսային կանոնների խախտում կատարած անձի վարչական ձերբակալում՝ մինչև երեք ժամ տևողությամբ:

2. Եթե կան բավարար տվյալներ անձի կողմից մաքսային սահմանով մարմնում թաքցրած ապրանք տեղափոխելու մասին, և եթե ~~անձը մաքսային մարմինների պաշտոնատար անձանց դիմադրություն է ցույց տալիս~~ անձը խոչընդոտում է մաքսային մարմնի պաշտոնատար անձանց գործառույթների իրականացմանը անձնական զննության ժամանակ, փորձում է փախչել դեպքի վայրից, ապա նա կարող է ձերբակալվել մինչև ~~երեք օր ժամկետով՝ ձերբակալման պահից 24 ժամվա~~

~~ընթացքում գրավոր տեղեկացնելով դատախազին~~ 6 ժամ՝ այդ մասին անհապաղ հայտնելով դատախազին:

3. Վարչական ձերբակալման ժամկետը հաշվարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով սահմանված կարգով:

4. Վարչական ձերբակալման մասին կազմվում է արձանագրություն, որտեղ նշվում են այն կազմող անձի պաշտոնը, անունը և ազգանունը, ձերբակալվածի տվյալները, ձերբակալման հիմքերը, վայրը, ժամը, ամսաթիվը:

5 Սույն հոդվածի իմաստով մաքսային մարմինների պաշտոնատար անձանց գործառույթների իրականացմանը խոչընդոտել է համարվում մաքսային մարմինների պաշտոնատար անձանց օրինական պահանջներին չենթարկվելը, մաքսային մարմինների պաշտոնատար անձանց դիմադրություն ցույց տալը, մաքսային հսկողությունից թաքցված ապրանքների հայտնաբերման աշխատանքներին խանգարելը կամ այլ կերպ մաքսային մարմինների պաշտոնատար անձանց պաշտոնական պարտականությունների իրականացմանը խոչընդոտելը: